ՀԱՅ–ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ
(20րդ դարի սկիզբ)

Դոկտ. Ա. Հ. ԹՕՓԱԼԵԱՆ

1.

Իր դարաւոր պատմութեան ընթացքում հայ ժողովուրդն ունեցել է քաղաքական, առեւտրական, տնտեսական եւ մշակութային առնչութիւններ շատ ժողովուրդների հետ, այդ թւում նաեւ իր աշխարհագրական միջավայրին պատկանող արաբների հետ:

Հայ–արաբական յարաբերութիւնների պատմութեան ակունքները մեզ տանում են դէպի հեռաւոր անցեալը:

Հայ մատենագրութեան էջերում արաբների, եւ արաբ պատմիչների ու աշխարհագիրների աշխատութիւններում հայերի եւ Հայաստանի մասին պահպանուած մեծածաւալ նիւթը կենդանի վկան է երկու ժողովուրդների հնագարեան շփումների առկայութեան: Այս պայմանաւորուած է ինչպէս պատմական եւ աշխարհագրական՝ այնպէս էլ քաղաքական հանգամանքներով:

Հայերը եւ արաբները պատկանում են միեւնոյն աշխարհագրական միջավայրին: Եւ ահա, վաղնջական ծանօթութեամբ, նրանց միջեւ հաստատուել են տարաբնոյթ՝ այլ սերտ կապեր:

Երկու ժողովուրդների միջեւ վաղագոյն ժամանակներից ըստեղծուած վերոյիշեալ պատմական կապերի մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում քաղաքական յարաբերութիւնները, որոնք ձեւա-

ւորուել են դարերի ընթացքում եւ անցել պատմական տարբեր շրջաններ։ Այդ ժամանակաշրջաններից իւրաքանչիւրը բնութագրուել է իր իւրայատուկ դիմագծով եւ գլխաւոր նպատակով։

Հայ-արաբական քաղաքական յարաբերութիւնները իրենց առաջին հանդրուանին ունեցել են միջպետական բնոյթ, եւ «պետական մակարդակով քաղաքական յարաբերութիւններ են հաստատուել հայերի ու արաբների միջեւ, որ [ոնք] սկսուել են Տիգրան Մեծից [եւ] հասել մինչեւ Կիլիկիայի թագաւորութեան անկումը»[1]։ Ժամանակի առումով՝ այս շրջանն ընդգրկեց «մ.թ.ա. 1-ին դարից մինչեւ մ.թ. 14-րդ դարը»[2]։

Հայ-արաբական քաղաքական, ինչպէս նաեւ տնտեսական եւ մշակութային, կապերը զգալիօրէն ուժեղացան եօթներորդ դարում, երբ Բիւզանդական Կայսրութիւնը կրկին մէջտեղ բերեց Հայաստանում քաղկեդոնականութեան տարածման հարցը եւ Հայոց Աշխարհում ստեղծեց քաղաքական լարուած կացութիւն։ Իր այդ կեցուածքով՝ Բիւզանդիան զուտ կրօնականից բացի հետապնդում էր նա՛եւ քաղաքական նպատակներ։ Այդ ուղիով նա ձգտում էր ապահովել կայսրութեան քաղաքական դիրքերը Հայաստանում եւ թոյլ չտալ օրըստօրէ հզօրացող Արաբական Խալիֆայութեան քաղաքական ազդեցութեանը տարածման Հայկական Լեռնաշխարհում։

Այդ ժամանակաշրջանին Հայաստանում նշմարուեց առկայութիւնը հասարակական եւ քաղաքական երկու հոսանքների։ Այն պարզորոշ կերպով արտայայտուեց 648-ին Դուինում հրաւիրուած եկեղեցական յատուկ ժողովում, ուր քննութեան դրուած էր Բիւզանդական Դաւանանքի ընդունման հարցը։ Ժողովին մասնակցում էին աշխարհիկ եւ հոգեւորական բարձրաստիճան ներկայացուցիչներ։ Աշխարհիկ մասնակիցներին գլխաւորում էր եօթներորդ դարի նշանաւոր զօրավար եւ քաղաքական գործիչ Թէոդորոս Ռշտունին, որը դէմ էր քաղկեդոնական դաւանանքի ընդունման առաջարկութեանը։ Դուինի վերոյիշեալ ժողովում յաղթանակ տարան Թէոդորոս Ռշտունին եւ իր կողմնակիցները[3]։

Հայ-բիւզանդական քաղաքական յարաբերութիւնների այսպիսի լարուած մթնոլորտում Հայոց համար ցանկալի էր եւ ձեռնտու արագ կերպով բանակցութիւնների մէջ մտնել հզօրացող Արաբական Խալիֆայութեան հետ։

Եւ ահա՝ հայ-արաբական քաղաքական մերձեցման առաջին քայլերը, որոնք ձեռնարկուեցին 648 թուականից սկսեալ՝ պաշտօնական տեսք ստացան 652 թուականի հայ-արաբական յատուկ պայմանագրով։ Քաղաքական եւ զինուորական բնոյթի այս առաջին պայմանագիրը բովանդակում էր հետեւեալ հիմնական կէտերը.

«1. Հայաստանը թօթափում էր բիւզանդական տիրապետութիւնը եւ ընդունում Արաբական Խալիֆայութեան հովանաւորութիւնը:

«2. Հայաստանը երեք տարի ազատւում էր Խալիֆայութեան նկատմամբ հարկային որեւէ պարտաւորութիւն կատարելուց, իսկ սահմանուած ժամկէտն անցնելուց յետոյ, հայերը պէտք է [որ] վճարէին արքունի հարկ եւ «սակը», որի չափն ու քանակը որոշուելու էին հայերի հայեցողութեամբ:

«3. Արաբական Խալիֆայութեան համաձայնութեամբ եւ թոյլտրութեամբ, հայերը կարող էին ունենալ 15,000-անոց հեծելազօր...:

«4. Այնուհետեւ, օտարերկրեայ յարձակումների դէպքում, Արաբական Խալիֆայութիւնը պարտաւորւում էր Հայաստան ուղարկել այնքան զօրք՝ որքան կը պահանջուէր հայերի կողմից:

«5. Պայմանագրով Խալիֆայութիւնը խոստանում էր չմիջամտել Հայաստանի ներքին գործերին, եւ որպէս դրա լաւագոյն երաշխիք՝ յատուկ կէտով պարտաւորութիւն էր ստանձնում ոչ միայն զօրք չմտցնել Հայաստան՝ այլեւ երկրի բերդերում չտեղաւորել ոչ մի պաշտօնեայ, արաբական սպայ կամ թէկուզ մէկ հեծեալ զինուոր»[1]:

Վերոյիշեալ պայմանագրով սկսուած Հայ-արաբական քաղաքական մերձեցումը այդ հանգրուանին ունեցաւ կարեւոր նշանակութիւն Հայաստանի համար, այսինքն՝ առժամանակ ապահովեց անոր անվտանգութիւնը արաբական ասպատակութիւնից, իսկ միւս կողմից՝ հայ ազնուականները եւ նախարարները պահպանելով իրենց սեփականատիրական, ժառանգական եւ այլ կարգի արտօնութիւնները՝ դրանով իսկ մասամբ ապահովեցին Հայաստան Աշխարհի ներքին ինքնավարութիւնը:

Հայ-արաբական փոխյարաբերութիւնները շարունակուեցին արաբների կողմից Հայաստանի նուաճումից յետոյ ալ: Մօտ երկու դար Հայաստանը գտնուելով Արաբական Խալիֆայութեան կազմում՝ գործուն մասնակցութիւն ունեցաւ Խալիֆայութեան տնտեսութեան աշխուժացման եւ քաղաքական յարաբերութիւնների զարգացման մարզերում:

2.

Տասնվեցէն տասնեօթներորդ դարերի ընթացքում արդէն հիմք է դրւում հայ-արաբական քաղաքական առնչութիւնների պատմական երկրորդ շրջանին, որ գոյատեւեց մինչեւ Առաջին Աշխարհամարտի աւարտը եւ Օսմանեան Կայսրութեան վախճանը: Մինչ այդ կործան-

ուած էին Արաբական Խալիֆայութիւնը եւ Կիլիկիայի Հայկական Թագաւորութիւնը, եւ հայ եւ արաբ ժողովուրդներին վիճակուած էր քաղաքական նոյն ճակատագիրը: Թէ՛ հայերի եւ թէ ալ արաբների համար մղձաւանջային շրջան էր: Նրանք ընկած էին օսմանական լծի տակ: Այս պայմանների մէջ արաբները եւ հայերը իրենց քաղաքական յարաբերութիւնները իրագործում էին «որպէս իրենց պետականութիւնը կորցրած եւ միեւնոյն բռնակալական՝ օսմանեան լծին ենթակայ երկու ժողովուրդներ»[5]:

Ահա ա՛յս էլ հանդիսացաւ հայ-արաբական քաղաքական յարաբերութիւնների այս շրջանի իւրայատկութիւնը:

Պատմական այս հանգրուանին, երբ հայ եւ արաբ ժողովուրդների ճակատագրերը քաղաքական առումով սերտօրէն խաչաձեւում էին իրար՝ աւելի արդիւնաւէտ բնոյթ ստացան հայ-արաբական քաղաքական կապերը: Ու ծնուեց կարեւոր մի ճշմարտութիւն, այն՝ որ գոյութիւն ունի մի ընդհանրութիւն արաբ եւ հայ ժողովուրդների քաղաքական շահերի միջեւ: Եւ օսմանեան բռնատիրական լծից ազատագրուելու գաղափարը հետզհետէ դարձաւ երկու ժողովուրդների քաղաքական հիմնական նպատակը, եւ հիմք հանդիսացաւ քաղաքական յարաբերութիւնների զարգացմանը նրանց միջեւ:

Ահա ազգային ու քաղաքական այս ընդհանուր նպատակը մղեց հայ եւ արաբ ժողովուրդներին միաւորել իրենց ջանքերը եւ միմիանց նեցուկ դառնալ օսմանեան բռնատիրութիւնից ազատագրուելու համար մղուող պայքարում:

Այս առումով յիշատակութեան արժանի է Արաբական Հայրենիքի Լիկայի գլխաւոր կոմիտէի 1905-ին հրապարակած եւ «Արաբական երկրները արաբներին» վերնագրուած կոչը, որ ուղղուած էր «Եւրոպայի [եւ] Հիւսիսային Ամերիկայի քաղաքակիրթ, լուսաւորեալ եւ մարդասէր ազգերին», եւ ուր նշում էր թէ «Թուրքիան գտնուում է խաղաղ ճանապարհով տեղի ունենալիք մեծ փոփոխութեան նախօրէին: Արաբները, որոնց Թուրքերը բռնանում էին նրանց երկպառակելով կրօնադաւանական աննշան հարցերում, գիտակցել են իրենց ազգային, պատմական եւ ազգագրական միատարրութիւնը եւ ցանկանում են անջատուել Օսմանի փտած ծառից՝ միաւորուելու մի անկախ պետութեան մէջ:

«... Թուրքիայից մեր անջատման փաստի շնորհիւ, ճնշուած բոլոր ազգերը՝ քրտերը, հայերը, ալպանացիները եւ այլն եւ այլն իրենց ազատութիւնը պիտի ձեռք բերեն, քանի որ արաբների միջոցով է, որ սանձահարում են ալպանացիներին, եւ ալպանացիների ձեռքով է որ ճզմում են պուլղարներին: Դարձեալ արաբների ձեռքով է որ նրանք ճնշում են քրտերին եւ քրտերի ձեռքով է որ ջարդում են հա-

յերին։ Հետեւաբար՝ հենց որ մենք լքենք Սուլթանին[6]՝ ամէն մի ազգ պիտի իր անկախութիւնը հռչակի եւ աշխարհը պիտի փրկուի երկպառակութեան այն աղբիւրից՝ որ Արեւելեան Հարց է կոչուում»[7]։

Հայ–արաբական յարաբերութիւնները մեկնող ուշագրաւ փաստաթուղթ է արաբական քաղաքական յայտնի գործիչ Նեճիպ Ազուրիի 15 Ապրիլ 1905 թուակիր նամակը, որ առաքուեցաւ հայ հասարակական գործիչ եւ Լ'Արմենի թերթի հրատարակիչ եւ խմբագիր Մինաս Չերազին[8]։ Նամակում Ազուրին գրում է.

«Սիրելի հրատարակիչ,

«Ձեզ եւ Ձեր գնահատելի թերթի հետ կապ հաստատելու հաճելի պարտականութիւնը ստանալով՝ ես ապաւինում եմ Ձեր համակրանքին, յոյս ունենալով, որ օգնելու էք ինձ՝ տեղադրելով Ձեր թերթում այս մի քանի տողը, որով ցանկանում եմ հրապարակօրէն արտայայտել իմ շնորհակալութիւնը Ձեր եւ Ձեր աշխատակիցներին այն խանդավառութեան համար, որով դիմաւորեցիք արաբների հայրենիքի զարթօնքը եւ այն վեհանձն կամպանիայի (արշաւի) համար, որ բարեհաճել էք ձեռնարկել ի նպաստ մեր ազգային շարժման։

«Նոյն շնորհակալութիւնը յղում եմ Ձեր բոլոր հայրենակիցներին, որոնք, հիմք ունեմ կարծելու, նոյն զգացմունքն ու համակրանքն ունեն մեր հանդէպ»[9]։

Շարունակելով իր նամակը Ազուրին դեռ շեշտում է հայ եւ արաբ ժողովուրդների ընդհանուր շահերի առկայութեան եւ հայերի ունեցած արժանիքի հանգամանքները։ «Քաջաբար առաջարկելով ամբողջ ուժով օժանդակելու արաբներին Թուրքական Պետութեան դէմ՝ միւս կուսակցութիւններից առաջ, հայերը մի անգամ եւս ցոյց տուեցին, որ գիտակցում են մեր ընդհանուր շահերը։ Նրանք նոյնպէս ցոյց տուեցին իրենց արժանիքը միւս ազգութիւնների համեմատ, որոնք Օսմանեան Կայսրութիւն կոչուած այդ անհետեւողական կառավարման ճնշման տակ են գտնուում դեռ։

«Այս արժանիքը դեռեւս բաւականին ճանաչուած չէ։ Իմ կարծիքով այդ արժանիքը կայանում է նրանում, որ հայերը չեն վախեցել տասը տարի առաջ[10] արթնացնելու իրենց ազգային զգացմունքը ասիական ժողովուրդների մէջ Թուրքիա–չերքէզական բռնակալութեան դէմ, այնպէս՝ ինչպէս յոյները 19–րդ դարի սկզբում համարձակութիւն ունեցան ազդանշան տալ պալքանեան ժողովուրդներին ազատագրուելու քմահաճ փատիշահների դաժան բռնակալութիւնից։ Եւ թուրքերը երբեք չեն կարող ջարդերի մէջ խեղդել հայերի օրինական ձգտումները, [այնպէս՝] ինչպէս [որ] Եւրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի միացեալ ուժերը չկարողացան խեղդել Յունական

Ապստամբութիւնը, որի բարիքները տարածուեցին ամբողջ Պալքան-ների վրայ։ Հայ հերոսների արիւնով թրջուած հողից բարձրացել են երկու մեծ հսկաներ՝ քրդերի հայրենիքը եւ արաբների հայրենիքը, որոնք հիմա բարձրացնում են իրենց ծանր մահակները՝ իջեցնելու համար բռնակալի գլխին»[11]։

Նամակի մէջ ուշագրաւը արաբ գործիչների եզրայանգումն է, որը բնորոշ է արաբների զարթօնքի ժամանակաշրջանի արաբ ազգային քաղաքական գործիչներին։ «Հետեւաբար», եզրակացնում է Ազուրին, «պէտք է ճանաչենք եւ հասկանանք իրար, եւ պէտք է միանանք յարձակուելու համար ընդհանուր թշնամու դէմ, որը այնքան շատ օգտուեց մինչեւ հիմա մեր անհամաձայնութիւնից մեզ առանձին-առանձին ջախջախելու համար։ Նա Ալպանիայի, Մակեդոնիայի, Հայաստանի, Հաուրանի, Նեճդի, Եմենի եւ Հիճազի յեղափոխական տարբեր ուժեր մէկը միւսին դէմ կանգնեցրեց։ Այսպիսով՝ ոչ մի ազգ Թուրքիայում չի ցանկանում այլեւս ստրուկ լինել, քանի որ բոլորն էլ ապստամբուել են մէկը միւսի յետեւից։ Իրար չհասկանալն է նրանց պահում ատելի լծի տակ։ Բայց այսօր արաբական բոլոր նահանգները միացած են նոյն հայրենասիրական զգացմունքով, մէկ ղեկավարութեան տակ։ Հայերը արդէն միացել են մեզ հետ։ Ուրիշ խմբաւորումները նոյնպէս միանում են մեզ եւ ազատագրութեան օրը այնքան հեռու չէ՝ որքան կարող են կարծել»[12]։

Տրուած այս հատուածներում հիանալի կերպով արտայայտուած են արաբ եւ հայ ժողովուրդներու քաղաքական շահերի ընդհանրութիւնը եւ նրանց միասնաբար հանդէս գալու անհրաժեշտութիւնը։

Քսաներորդ դարի սկիզբին հայ-արաբական յարաբերութիւնների զարգացման մասին է վկայում 18-23 Յունիս 1913-ին Երիտասարդ Արաբների կազմակերպութեամբ Փարիզում հրաւիրուած Արաբական Քոնկրէսի որոշումները[13]։

Քոնկրէսին մասնակցել են Էլ-լէ-մերքեզիէի, Պէյրութի Բարենորոգումների Լիկայի եւ Ամերիկայում գործող Արաբական Հայրենակցական Միութեան 24 պատգամաւորները եւ 200 հիւրեր։ Քոնկրէսն «չափազանց անհրաժեշտ» է նկատել «էական բարենորոգումները Օսմանեան Կայսրութեան համար», եւ որ «նրանք պէտք է իրագործուեն արագ կերպով»[14]։ Նոյն ատեն՝ մասնաւոր կէտով մը Քոնկրէսն իր դիրքորոշումը արտայայտեց հայ ժողովուրդի ազգային արդար պահանջների նկատմամբ, եւ շեշտեց, որ «8. Քոնկրէսը հաւանութիւն է տալիս եւ իր համակրանքն է արտայայտում Թուրքիայի

հայերի պահանջներին, որոնք հիմնուած են ապակենդրոնացման սկզբունքների վրայ եւ նրանց պատուիրակի միջոցով ողջոյն է յղում նրանց...»[15]:

Արաբ եւ հայ ժողովուրդների ազգային շահերի ընդհանրութեան գաղափարը, որ յստակօրէն գծուած ենք գտնում քսաներորդ դարասկիզբին՝ դարձաւ առանցքը հայ-արաբական քաղաքական յարաբերութիւնների: Փաստական նիւթի ուսումնասիրութիւնը մեզ յանգեցնում է այն հետեւութեան, որ համանման մղձաւանջային իրադրութեան մէջ հայերը եւ արաբները հանդէս եկան որպէս բնական դաշնակիցներ՝ մեկնակէտ ունենալով իրենց ազգային շահերի ընդհանրութեան գաղափարը: Ահա այս հանգամանքն էր որ այս հանգրուանին մեծ դեղ խաղաց հայ-արաբական քաղաքական յարաբերութիւնների ամրապնդմանը եւ անոնց յետագայ զարգացմանը մէջ: «Այս հանգրուանին», գրում է արաբ յայտնի մտաւորական Դոկտ. Հիւսէին Ալի Եթիմը, «հայոց աշխոյժ օժանդակութիւնն ու մասնակցութիւնը անցողիկ պարագայ մը չէր միայն, այլ՝ պայքարային մասնակցութիւն մը հասարակաց եւ դառն ազդակներու հանդէպ, որոնցմէ տառապեցան արաբ եւ հայ ժողովուրդները»[16]:

3.

Հայ եւ արաբ ժողովուրդները մեծագոյն ողբերգութիւնն ապրեցին Առաջին Աշխարհամարտի տարիներին: Օգտուելով պատերազմի ընձեռած հնարաւորութիւնից՝ Երիտասարդ-Թուրքերի կառավարութեան ղեկավարները «որոշեցին որ հասել է յարմար պահը վերջ տալու երկու ուժեղ ազգային շարժումներին՝ արաբական ազգայնականների շարժմանը Սիրիայում, Իրագում եւ Հիճազում, եւ հայկական շարժմանը՝ Արեւելեան Անատոլիայում»[17]:

Հայկական եւ արաբական հարցերը լուծելու համար Երիտասարդ-Թուրքերը դիմեցին ռազմական ուժի եւ որդեգրեցին բնակչութեան զանգուածային տեղահանման եւ բնաջնջման քաղաքականութիւնը: 1915-ի Ապրիլին նրանք սկսեցին կենսագործել հայ ժողովուրդի ամբողջական ոչնչացման ոճրապարտ ծրագիրը: Մօտ մէկուկէս միլիոն հայ ոչնչացնելով՝ երիտասարդ-թուրք ոճրագործները արաբական անապատները քշեցին մնացած հայ բնակչութեանը: Իսկ արաբ ասպնջական ժողովուրդը լայն բացեց իր գիրկը հարիւր հազարաւոր հայ գաղթականների առջեւ եւ նեցուկ եղաւ նրանց:

Մահուան ճիրաններից փրկուած հայ տարագիրները ապաստան գտան Սիրիայում, Լիբանանում, Յորդանանում, Եգիպտոսում եւ արաբական այլ երկրներում:

Հաստատուելով այդ երկրներում՝ հայ ժողովուրդը սերտ յարաբերութիւններ հաստատեց արաբ ժողովուրդի հետ։

Լաւագէս ըմբռնելով որ արաբ ժողովուրդը պատրաստ է ապստամբութեամբ Թուրքիայից անջատուել եւ նուաճել իր անկախութիւնը՝ Թուրք ոճրագործները որոշեցին նոյնը իրագործել արաբական երկրներում, եւ 1916-ի գարնանը նրանք փորձեցին հաշուեյարդար տեսնել արաբների հետ։ «1916 թ. գարնանը Դամասկոսի եւ Պէյրութի հրապարակները ծածկուեցին կախաղաններով։ Մահապատիժի ենթարկուեց մօտ 800 մարդ՝ արաբական ազատագրական շարժման գործիչներից»[18]։ Արաբ բնակչութիւնը ենթարկուեցաւ նաեւ բռնի տեղահանման։ «Ճեմալ Փաշայի կարգադրութեամբ տասնեակ հազարաւոր արաբներ իրենց ընտանիքներով բռնի քշուեցին անապատում ստեղծուած համակենտրոնացման ճամբարները»[19]։ Հայերը եւ արաբները դարձեալ զոհը դարձան միեւնոյն քաղաքականութեան։ Սակայն հակառակ իր դէմ գործադրուած ահաւոր ցեղասպանութեան՝ արաբական երկրներում եւ ընդհանրապէս ամէնուրեք վերապրող հայ ժողովուրդը հետապնդեց իր ազատագրութեան նուիրական դատը։ Իսկ արաբ ժողովուրդը չհրաժարուեց ապստամբութեան դրօշ բարձրացնելէ՝ վերջնականապէս ազատագրուելու համար Թուրքիայի տիրապետութիւնից։

Հայ-արաբական փոխյարաբերութիւնների այս հանգրուանը յատկանշուեց զինական համագործակցութեամբը հայ եւ արաբ ժողովուրդների։ Գործնական գետնի վրայ այն իր արտայայտութիւնը գտաւ Արեւելեան Լէգէոն անունով զինուորական խումբի ստեղծման մէջ, որը բաղկացած էր հայերից եւ սուրիացիներից[20]։ Խումբը ձեւաւորուեց կամաւորական սկզբունքով։ Հայ կամաւորների թիւը կազմեց 3000[21]։

Արեւելեան Լէգէոնի ստեղծման որոշումը ընդունուեց Ֆրանսիայի Արտաքին Գործոց Նախարարութեան եւ Հայ Ազգային Պատուիրակութեան միջեւ 1916-ի Նոյեմբեր 26-ին գոյացած համաձայնութեան հիման վրայ[22]։ Համաձայնութեան մէջ շեշտուած էր, որ «Ֆրանսական Կառավարութիւնը որոշած է դրապէս քաջալերել հայ եւ սուրիացի ժողովուրդների «Թուրքին դէմ պայքարելու բաղձանքները»[23]։ Լէգէոնը պիտի մասնակցէր «Ասիական Թուրքիոյ մէջ տեղի ունենալիք գործողութեանց եւ պիտի դրուի Սուրիոյ Նաւային Զօրաբաժինը գլխաւորող Մովակալի բարձր հրամանատարութեան ներքեւ»[24]։

Լէգէոնի ընդհանուր հրամանատար նշանակուեցաւ Ֆրանսիական բանակի գնդապետ Ռոմիոն[25]։

Առաջին Համաշխարհային Պատերազմի աւարտման շրջանին Արեւելեան Լէգէոնը մասնակցեց օսմանեան լծից արաբ ժողովուրդի ազատագրման համար մղուած պայքարին։

1918 Սեպտեմբեր 19-ին, երբ անգլիական բանակը Պաղեստինում յարձակման անցաւ Ռաֆաթի[26] եւ Արարայի շրջաններում՝ «Արեւելեան Լէգէոնը ռազմական դիրքեր գրաւեց Արարա սարի մօտ՝ Նապլուսից հարաւ»[27]։ Հայ եւ արաբ ռազմիկները դիմադրեցին թուրքերին եւ ի վերջոյ ստիպեցին նրանց փախուստի դիմել։ Խօսելով Արարայի մօտ Արեւելեան Լէգէոնի մարտական գործողութիւնների մասին՝ գնդապետ Ռոմիոն շեշտեց հետեւեալը, թէ «աւելի քան տասներկու ժամուան ընթացքին վաշտին սքանչելի կեցուածքը, հակառակ իր կորուստներուն, կարելի ընծայեց իրականացումը թշնամին կասեցնելու իր առաքելութիւնը, որով կռուին շարունակութիւնը վաշտին կողմէ աւելորդ եղաւ»[28]։ Աւելի՛ն «մենք հպարտ միխիթարութիւնն ունինք հողին յանձնելու հայ հերոսները, բոլորն ալ առաջին գծին վրայ ինկած, իրենց երեսը դէպի թշնամին, օրինակ հանդիսանալով։ Անոնք բոլորն ալ արժանի են Պատերազմական Խաչի (Croix de Guerre), ամէնքն ալ պաշտպան սուրբերն են Արեւելեան Լէգէոնին»[29]։

Այս փաստը ուշագրաւ է այն առումով, որ տուեալ հանգրուանին հայը կարողացաւ ցուցաբերել քաղաքական ճկուն իմաստութիւն եւ նեցուկ հանդիսացաւ արաբ ժողովուրդի ազգային արդարացի պայքարին։ Հայը որպէս զինուոր արեան իր մկրտութիւնն ստացաւ արաբական հողի վրայ արաբ զինուորի կողքին, իրականութիւն մը, որ ծառայեց հայ-արաբական քաղաքական համագործակցութեան ամրապնդման։

Հայ-արաբական յարաբերութիւնները սերտացման շրջան ապրեցին, երբ թօթափելով օսմանեան տիրապետութիւնը՝ արաբական երկրները պայքար ծաւալեցին իրենց ազգային, անկախ եւ ինքնուրոյն պետութեան ստեղծման համար։

Այս առնչութեամբ հետաքրքրական է Սիրիայի արաբ ժողովուրդի պայքարը իր ազգային պետութեան ստեղծման համար, որի դէմ, այդ հանգրուանին, հանդէս եկաւ Ֆրանսիան։

Սիրիացի արաբ ժողովուրդի պայքարի ղեկավարութիւնը ըստանձնեց Էմիր Ֆէյսալը, որ 9 Մայիս 1919-ին ուղերձով դիմեց Դամասկոսի քաղաքապետարանում հաւաքուած ինչպէս Սիրիայի՝ այդպէս էլ Պաղեստինի, Յորդանանի եւ Լիբանանի ազգային առաջնորդներին, թէ հաւանութիւն տալի՞ս են նրա դիրքորոշմանը եւ քաղաքականութեանը»[30]։ Ներկաները տուին դրական միաձայն պատասխան։

Ի պատասխան Էմիր Ֆէյսալի հարցադրման՝ Ելոյթ ունեցաւ նաեւ Սիրիայում տեղաւորուած հայ գաղթականների հոգեւոր առաջնորդը, որ ներկայ էր հաւաքին։ Պաշտպանելով սիրիացիների ազգային անկախութեան համար մղած պայքարը՝ նա միաժամանակ շնորհակալութիւն յայտնեց արաբներին՝ վերջին չորս տարուան ընթացքում հայ գաղթականների նկատմամբ նրանց լաւ վերաբերմունքի համար եւ եզրակացուց, թէ «հայերի պատմութեան մէջ արաբների անունը կը գրուի ոսկէ տառերով»[31]։

Պատուիրակները լսելուց յետոյ՝ Էմիր Ֆէյսալը շարունակեց իր ճառը, եւ կանգ առաւ երկրի կառավարման ձեւի վրայ։ «Ես կարծում եմ, որ աւելի շատ ուշադրութիւն է դարձուելու փոքրամասնութիւնների իրաւունքներին, որպէսզի սրանով վերացուեն ատելութիւնը եւ կրօնական թշնամանքը, զորս ստեղծել էին Թուրքերը, եւ դրանց փոխարէն ցանել սիրոյ եւ եղբայրութեան սերմեր տարբեր կրօնի պատկանող մարդկանց միջեւ»[32]։

Ընդունելով արաբ ասպնջական ժողովուրդի մարդասիրական դիրքորոշումը իր հանդէպ՝ թրքական գեհէնից ճողոպրած եւ արաբական երկրներում ապաստան գտած տարագիր հայութիւնը առանց վարանելու պաշտպան կանգնեց եւ մասնակցեց նրա ազգային անկախութեան համար մղած պայքարին։

Քաղաքական այս կեցուածքով՝ հայերը ապացոյցը տուին գերագոյն զոհողութեան։

Այսպիսով հայ եւ արաբ ժողովուրդները ցուցաբերելով քաղաքական խոր իմաստութիւն՝ քսաներորդ դարի առաջին երկու տասնամեակներին կարողացան հիմնել արիւնով նուիրագործուած քաղաքական սերտ յարաբերութիւններ, որոնք իրենց զարգացման վերելքը ունեցան նաեւ յետագայ տասնամեակներին եւ շարունակւում են ցայսօր։ Հայ եւ արաբ ժողովուրդների միջեւ առկայ եւ դարերից եկող պատմական եւ քաղաքական կապերը եւ միացեալ դիրքորոշումները էական եւ ճակատագրական հարցերի նկատմամբ այսօր հաստատում են կարեւորութիւնը երկու ժողովուրդների միջեւ քաղաքական, տնտեսական եւ մշակութային փոխյարաբերութիւնները էլ աւելի զարգացնելու եւ խորացնելու անհրաժեշտութեան։

Ա. Թ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ն. Ցովհաննիսեան, «Հայ-արաբական քաղաքական համագործակցութեան պատմութիւնից», *Արարատ*, Պէյրութ, 14 Յունիս 1989:
2. Նոյն:
3. Այս մասին տես՝ Վազգէն Յակոբեան, *Կանոնագիրք Հայոց*, հտ. Բ., Երեւան 1971, էջ LXXII-LXXIII, իսկ այս առիթով ընդունուած կանոնագրին համար տես՝ նոյն, էջ 200–215:
4. Ս. Տ. Մելիք-Բախշեան, *Հայաստանը 7-9-րդ դարերում*, Երեւան, 1968, էջ 69–70:
5. Ցովհաննիսեան, *Արարատ*, 14 Յունիս 1989:
6. Կ'ակնարկուի Սուլթան Ապտուլ Համիտ Բ.-ին:
7. Eugene Jung, *Les Puissances devant la Révolte Arabe : La Crise mondiale de demain*, Paris, 1906, p. 22-24. տես նաեւ «Արաբական մի շարք փաստաթղթեր արաբաբրբական յարաբերութիւնների վերաբերեալ», Հ. Ս. Սարգսեան եւ Ա. Հ. Թոփալեան [թրգմ.], *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ ժողովուրդներ*, հտ. VI, *Արաբական Երկրներ*, Երեւան, 1974, էջ 217–218: Ասկէ ետք կը նշուի որպէս *Փաստաթղթեր*:
8. Երուսաղէմի կառավարիչի օգնական եւ *Արաբ ժողովուրդի Զարթօնքը Ասիական Թուրքիայում* գրքի հեղինակ Նեճիպ Ազուրիի նամակին համար տես *Փաստաթղթեր*, էջ 219–220, եւ *L'Arménie*, Paris, 15 Avril 1905:
9. *Փաստաթղթեր*, էջ 219:
10. Կ'ակնարկուի Պոլսոյ 1895-ի դէպքերուն եւ ապտուլհամիտեան բռնատիրական շրջանին:
11. Տես՝ *Փաստաթղթեր*, էջ 219–220, տես նաեւ *L'Arménie*, Paris, 15 Avril 1905:
12. *Փաստաթղթեր*, էջ 220:
13. Փարիզի Արաբական Քոնկրէի մասին ընդհանրապէս տես՝ *Փաստաթղթեր*, էջ 222, եւ احسان هندي، كفاح الشعب العربي السوري، ١٩٤٨ – ١٩٢٨، دمشق، ١٩٦٢، ص. ٢٠٢ – ٢٠١.
14. *Փաստաթղթեր*, էջ 222:
15. Նոյն, էջ 222–223:
16. *Զարթօնք*, Պէյրութ, 14 Յունիս 1989:
17. Էմին Սաիտ, *Քառասներորդ Դարու Արաբական Յեղափոխութիւնները*, Մոսկուա, 1964, էջ 79 (ռուսերէն թարգմանութիւն՝ امين سعيد، ثورات العرب في القرن العشرين).
18. Ն. Յ. Ցովհաննիսեան եւ Հ. Ս. Սարգսեան, *Միրիան Անկախութեան Համար Մղուած Պայքարում*, Երեւան, 1975, էջ 22:
19. Նոյն:
20. Տ. Յ. Պօյաճեան, *Հայկական Լէգէոնը* (պատմական յուշագրութիւն), Ուրբրբաուն, 1965, էջ 9: Արեւելեան Լէգէոնի ստեղծման եւ կազմակերպման մասին տես՝ Arthur Beylerian, *Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises*, (1914-1918), Paris, 1983, p. 278-283:
21. Պօյաճեան, էջ XXII:
22. Նոյն, էջ 15–16:
23. Նոյն, էջ 9:
24. Նոյն, էջ 10:
25. Նոյն, էջ 21:

26. Ֆրանսական պաշտօնական աղբիւրներ զայն կը ճանչնան որպէս Բաֆահ. տես՝ Beylerian, p. 92 եւ 672:
27. Յովհաննիսեան եւ Սարգսեան, էջ 32:
28. Պօյաճեան, էջ 129:
29. Նոյն:
30. Այս մասին տես՝ Great Britain, Foreign Office, *Documents on British Foreign Policy*, 1919-1939, vol. IV, London, 1952, pp. 267-272: Տես նաեւ՝ *Փաստաթղթեր*, էջ 229-230:
31. *Documents*, p. 272:
32. *Փաստաթղթեր*, էջ 230:

ARAB-ARMENIAN POLITICAL RELATIONS ACCORDING TO SOME ARAB DOCUMENTS (Early XX Century)

(Summary)

Dr. A. H. TOPALIAN

Making use of Arab, Armenian and foreign diplomatic documents the author of the article examines the roots of the Arab-Armenian political relations in the early twentieth century, though, as a background, Dr. Topalian sheds some light on these relations both in the antiquity and in the early Middle Ages. The author asserts that the main concern of these relations was but the liberation of the two peoples' respective homelands from the Ottoman domination and yoke, a purpose towards the fulfillment of which the Arabs and the Armenians did not decline of shedding blood and sacrificing their lives for each others' political aspirations.